նա յուսադրեաց զնոսա լինել անկասկած, զի պատուէր ունիմ ասէր՝ 'ի Կոստանդինուպոլսոյ. գնացին եւ առ այլ մեծամեծս քաղաքին շահել զմիտս նոցա։

Այլ Յոյնք յառաջագոյն որսացեալ էին 'ի կողմն իւրեանց զկամս Դատաւորին 'ի ձեռն հանդերձապետի (Բիւրքի Պաշի) նորին որ էր ազգաւ Յոյն. նոյնպէս զքաղաքապետն և զայլ երեւելի այլազգիս։ Իսկ Արքունի պաշտօնեայք կատարեալ զգործս իւրեանց 'ի Դամասկոս՝ մեկնեցան անտի, եւ հասեալ յԵրուսաղէմ իջին արտաքոյ քաղաքին 'ի տեղի ինչ, և գրեցին առ քաղաքապետն պատրաստել տեղի իջեւանի Խօճաքեանին և գաբուճիլէր քեահեասի Մէհէմմէտ Պէյին, որ կարգեալ էր ոստիկան 'ի կողմանէ Կուսակալին. զի Մուվէլլայ Վէֆէնդն և Մէյմուր Գալֆուն եղեալ էին 'ի մտի իջեւանիլ 'ի տուն Նախբպին. այլ քաղաքապետն պատուէր արձակեաց 'ի վանս Հայոց պատրաստել տեղի եկելոց եւ նոքա արարին պատասխանի, թէ սոքա կարգեալ են գործակալ 'ի Տէրութենէ 'ի վերայ երկուց ազգաց. մեզ միայն չէ անկ հոգալ զնոսա, մանաւանդ թէ նոքա ոչ առնուն յանձն իջեւանիլ 'ի վանս քրիստոնէից. եւ Յոյնք իսպառ մերժեցին զնոսա, զի 'ի Կոստանդինուպոլիս ազգայինք նոցա ոչ ունէին առ այդ հաճութիւն։ Գնացին ընդ առաջ նոցա Դիոնէսիոս վարդապետ եւ դանձապետ քաղաքապետին. և 'ի լինել բանից, ասեն. ոչ է պարտ պաշտօնէից Տէրութեան իջեւանիլ 'ի վանս օտարաց, եթէ վոյթ իցէ քաղաքապետին պատրաստեսցէ մեզ տեղի. եւ ապա եկեալ բազմութեամբ մտին 'ի քաղաքն ('ի 10 Մայիսի)։ Մուվէլլայն և Ճարտարապետն պարագայիւք իւրեանց օթեցան 'ի տուն Նախիպին, որպէս ասացաք. Խօճաքեանն յայլ տեղի, և ոստիկան Կուսակալին առ քաղաքապետն. և 'ի վաղիւն 18 սպասաւորօք եւ գրաստուք եկեալ եմուտ 'ի վանս Հայոց, զի առաջին տեղին աւերակ էր, և նոցա սիրով ընկալեալ հոգային զպէտս նոցա։ Խօճաքեանն ազգ արար քաղաքապետին հոգալ զպէտս իւր եւ իւրոցն ամենայն պարագայիւք 'ի վանսց Հայոց և Յունաց. զի 'ի վերայ նոցա ոստիկան կարգեալ եմք ասէ 'ի Տէրութենէ։ Ի մերժելն Յունաց, ստիպէր քաղաքապետն զՀայս, որոց հարկ եղեւ նորոգել զիջեւանս